

## ԿՐՈՆԱԿԱՆ

ԽՂՃԻ ԳԱՏԱՍՏԵՆԻ ԸԹԱԶ

(Բարոքեան սերմերից).

Մի մեծ քաղաքի մէջ կէս գիշերից անց՝ լուսադէմին իրարանցում ընկաւ։ Ինչ որ մարդիկ վայրենի աղաղակ բարձրացնելով վազում էին փողոցով։

Դժբախտութիւն, դժբախտութիւն, ամեն բանի վերջն է։ Ոչ ոք չի խնայուիլ։ Գոռում-գոչումները լուսում էին և լուսաւոր գահիններում, ուր պարում էր երիտասարդութիւնը և հիւանդանոցներում, ուր լուսում էին հոտաշներ և ցնորումներ։ և ներքնայարկի անկիւններում, ուր պատսպարուած էր աղքատութիւնը։ Զանգահարում էին։ Մարդիկ շուարած գուրս էին թափում տներից, խառնուում ամբոխի հետ և ընդհանուր անհասկանալի վախով համակռած, վազում էին դէսի հրապարակ, որ լուսաւորուած էր մռայլ, շարագուշակ շողով։ Խոկ այնտեղ, հրապարակի վրայ, որ լեցուն էր ժողովրդով, բարձրութեան վրայ կանգնած էին ինչ որ անյայտ ու զգեստաւորուած մարդիկ և նրանցից ամեն մինը աջ ձեռին բռնած ունէր վառած կերոն։ Նրանց դէմուդէմ նոյն բարձրութեան վրայ կանգնած էր մի կին։ Նրա տեսքը վսեմ էր, բայց մաքուր և պայծառ աչքերում, հեղ դէմքի վրայ երեսում էր այնպիսի տանջող թախիծ, այնպիսի հոգեկան տանջանք, որ մարդու սիրո էր ճմլում միմիայն նրա վրայ նայելով։

Հրապարակը լեցուեցաւ ժողովրդով։ Խօսակցութեան և աղմուկի ձայնը կտրուեց։ Ամենը անթարթ նայում էին կնոջ և նրա յետեր կանգնած կերոնակիր պատանիների վրայ։ Խոկ կինը ձեռները գլխին վեր բարձրացնելով, սկսեց արագ՝ հրապարակի ամենահեռաւոր անկիւնում իսկ լսելի ձայնով։

—ԱՇ մարդիկ, ես ձեր խիղճն եմ. յոգնեցայ, անվերջ տանջանքներ, ցաւեր ու դարդեր անցան դլխովս. ես ամբողջովին ցաւից տապակուող վէրք եմ.

Ո՞հ, ի՞նչ երանի կլինէր, եթէ ես ձեզ նման կարողանայի քնեցնել ինձ հարբածութեամբ, լռեցնել կեանքի աղմուկով, շլացնել ստութեամբ. ըայց չէ. ես ձեր խիղճն եմ. ես չեմ կարող հայեացքս դարձնել ճշմարտութեան նայելուց, որտեղ տեսնում եմ ձեր որտերի անդրադարձած ստութիւնը. ես չեմ կարող այլ ես տանել ձեր բոլոր անարդարութիւնները, տմարդի չարութիւնները, անաօնական անառակութիւնները. Ուզում եմ մէկ անդամից ընդ միշտ վերջ դնել թէ իմ և թէ ձեր կեանքին. Տեսնում էք իմ յետեր կանգնած կերոնակիր պատանիներին. այդ կերոնները ձեր մտքի ամենավերջի գիւտերն են, նրանց մէջ թագնուած է սոսկալի սպանիչ ոյժ, որի առաջ ոչինչ է թէ կրակը, թէ ժանտախտը և թէ երկրաշարժը. Եթէ գետին ձգուի կերոններից թէկուզ մէկը, կլսուի սաստիկ-խլացուցիչ հարուած, որից յետոյ գետնի, ջրի և օդի մէջ կաշկանդուած բոլոր ոյժերը կարծակուին և կսկսեն սարսափելի կռիւ միմիանց հետ. Օդը պտոյտ կդայ հրային փոթսրկով, գետինը և ծովերը կդոլորշիանան և երկրագունտը փշուր փշուր կլինի. Ի չիք կդառնայ ողջ մարդկային անմաքուր աղջը և իմ վշտերն ու տանջանքները, որոնք գոյացել են ձեր անօրէնութիւններն ու անառակութիւնները տեսնելով, կվերջանան.

Այդ խօսքերը լսելով ամբոխը աղաղակեց.

—Խղճա, ողորմիր, խնայիր, մենք ուզում ենք ապրեր Խիղճը ասաց.—Խնայիր, խղճա, ապրել ենք ուզում, Ո՞հ, մարդիկ... Անմիտ երեխաներ, որ սիրահարուածներ են այն խաղալիքի վրայ, որը հէնց իրանք էլ փշացրին. Ծոմոեցիք կեանքը. Թունաւորեցիք նրան չարութեամբ, ապականեցիք անարդարութեամբ և դեռ ևս աղաղակում էք.—«Մենք ապրել ենք ուզում»: Միթէ այդպէս են ապրում: Դուք խնդրում էք ինձ խնայել, կարծես ես ուզում եմ վրէժ խնդիր լինել ձեր հասցրած վիրաւորանքի համար ես

տանջւում՝ եմ ոչ չարասրտութիւնից, այլ դէպի ձեզ  
տածածո սիրուց և կարևիցութիւնից, ևս տանջւում՝ եմ  
ձեր գործերի պատճառով կրածո ամօթից՝ Երբ վերջանում է  
յոգնած և թալկացած օրը, դուք ննջի դրկում, կամ  
կրքերի բորբոքման մէջ մռանում էք ձեր կեանքի այլան-  
դակութիւնը, իսկ ես գիշերուայ լուսթեան մէջ մեն-մենակ  
տանում եմ հայհոյուած արդարութեան, սառացրած  
սիրոյ և նախատուած մաքրութեան սարսափները։ Ոչ, ես  
ձեղ հետ դատուելու չեմ եկել և ոչ վլէժխնդիր լինելու,  
այլ եկել եմ ձեղ կեանքի լծից ազատելու՝ եկը ցոյց տալու։  
Ես մահով ուզում եմ իլել ձեղ անսամօթութեան, նախա-  
տանաց և վշտի ճիրաններից։ Եթէ կարող էք դուրս եկէք  
ի պաշտպանութիւն կեանքի, ապացուցէք, որ կեանքը գին  
ունի, որ նրանում կայ սրբութիւն, բարձրութիւն, վե-  
մութիւն, որոնց համար արժէ ապրել և չարչարուիլ։ Հա-  
մոզեցէք ինձ, որ ձեր կեանքը վիրաւորանք և ապականու-  
թիւն չէ Երկրի համար, որ դուք ունիք իրաւունք ապրելու,  
արժէք նրան և ես այն ժամանակ կհրամայեմ հանգցնել  
չարագուշակ կրակները։

Անորոշ յոյսը ոգեսորեց ամբոխին։ Բարձրացաւ բարձր,  
բազմահոգ շշուկ։ Մարդիկ յուզուած հարցնում էին իրար  
թէ չկայ արդեօք մէկը, որ իմանայ թէ ինչ կայ կեանքի  
մէջ սուրբ և վսեմ. բայց հրապարակի և փողոցների վրայ  
կանդնողներից ոչ ոք չգիտէր այդ։ Այստեղ կային տէրու-  
թեան կառավարիչներ, զինուորականներ, վաճառականներ,  
երաժիշտներ, հարուստ մարդիկ և բոլորն էլ սարսափով  
խոստովանում էին, որ իրենք երբէք չեն մտածել այդ-  
մասին, թէ աշխարհում սուրբ բան կայ թէ չէ. նրանք  
վսեմի և բարձրի մասին եղած խօսքերը համարում էին  
դատարկ յնորդներ. և ծիծաղում էին նրանց վրայ, որոնք  
հարստութիւնից և փառքից վեր էին դասում ընդհանուրի  
մասին հոգալը։ Այժմ բոլորը իրար էին խառնում, աղմկում՝  
ինդրելով խղճից մի փոքր համբերել։

—Մի քիչ սպասիր .. կդտնուի .. հաւանօրէն մէկը,  
որ կասէ Քեզ թէ ինչ բանի համար արժէ ապրել։

Այդ միջոցին ամբոխի միջից վազելով դուրս եկաւ երիտասարդ, բարձրահասակ, վայելչակաղմ և խիստ գեղեցիկ մի կին։ Նրա պարանոցը և կուրծքը սպիտակին էին տալիս թեթև, թափանցիկ շրջազգեստի շղարշի տակից։ Այդ շրջազգեստով մի ժամ առաջ նա թագաւորում էր մի փառաւոր խնջոյքի մէջ։ Դէպի առաջ տարածելով իւր մեր և մերկ ձեռները, նա հնչուն և դողդովուն ձայնով բացականչեց։

— Հանգցրէք կերոնները . . . ինչու ձեր դէմքերը մռայլ են և հայացըները դաժան։ Եկէք մեզ մօտ, ես ձեզ կսու վորեցնեմ ժպտալ։ Որքան հաճոյք կայ երիտասարդութեան գեղեցկութեան, սիրոյ գգուանքների, խնջոյքի ազմկալի ուրախութեան մէջ։ Ես ուզում եմ ապրել . . . միթէ չարժէ ապրել, եկէք զուարճանանք կեանքով։

Խիղճը տխուր հայեացք ձգեց գեղեցկուհու վրայ և ասաց։

— «Եատ սիրուն թիթեռնիկ ես, ուրախ մանուկ։ Երանի՛ թէ ես էլ կարողանայի քեզ պէս խելտհան լինել սիրոյ հրճուանքով և անզուսպ երիտասարդութեան զուարճութիւնները համարէի կեանքի բարձրագոյն բերկրանք. բայց ես գիտեմ, որ ուրախութեան ոգին, սիրոյ բոցը կանցնին, ինչպէս գինու ոգին, իրանից յետոյ թողնելով արբեցութեան ծանը հետևանքները։ Նայում եմ քեզ, բերկրում է սիրոս և մտածում եմ. «Քո գեղեցկութիւնը որ սրբութեան նշանաբանն է», ի՞նչու քո փայփայանքները այրում են, որպէս անապատի կիղիչ տօթը, ինչու նրանք սրօղում են բանականութիւնը, թուլացնում կամքը, խլացնում պարտքի ձայնը, ինչու ճշմարիտ հաւատացողները, հեղև սրտով մաքուր մարդկիկ միշտ անիծել են քո գեղեցկութիւնը ինչպէս չարիք և գայթակղութիւն։ Ինչու ընդհանուր ոգեորութեան ժամանակ մարդիկ չեն մտածում քո մասին, այլ մոռանում են քեզ և միմիայն ընդհանուր բժութեան միջոցին, երբ մարդիկ մոռանում են երկրի վրայ ամեն սրբութիւն և վսեմութիւն, խօնարհում են քո առաջ. պատում են քեզ ինչպէս աստուածութիւն և քեզ զոհում են իրանց կեանքը»

«Հայրենեաց ծանր օրերում ամուսինը թողնում է կնոջը, փեռան-հարսին. հայրենեաց սէրը յետ է մղում գեղեցկի սէրը. Փանտախտի, վտանգաւոր տարափոխիկ հիւանդութեանց ժամանակ բժիշկները նպանպէս մոռանում են իրանց կապակցութիւնը կանացի գեղեցկութեան հետ և թողնելով սիրելի էակին՝ գնում են յօդնութիւն տանջուողներին. Սակաւ չեն նոյնպէս այնպիսի դէպքեր, երբ գիտութեան մարդիկ անյայտ երկիրներ դանելու, կամ վտանգաւոր հիւանդութեանց առաջն առնելու համար, թէ վտանգաւոր ճանապարհորդութեանց ժամանակ, թէ իրանց գիտական աշխատանոցներում գիտութեան ծառայելը գեղեցկութեան ծառայելուց բարձր են դասում:

«Ես դեռ չեմ տառւմ, շարունակեց խիղճը՝ քրիստոնէական շարչարանաց այն ժամանակների մասին, երբ երիտասարդներ և կոյսեր իրանց բոլոր սէրը գնում էին խաչեալ Փրկչի ստների տակ: Այն ժամանակ մարդու և կնոջ մէջ գոյութիւն ունեցած սէրը չէր դովաբանւում, որպէս Աստուածային զգացմունք, այլ համարւում էր այնպէս, ինչպէս որ է—ծննդականութեան գրաւական, ընտանիքի հիմք: Բայց ահա հասաւ ժամանակը, երբ մարդիկ ստուցան թէ երկրային տէրութիւնից և թէ երկնքի արքայութիւնից, Այն ժամանակ չիմանալով ինչով լեցնել դատարկ հոգիները՝ մարդիկ սկսեցին երկրպագել միմիայն—այր մարդը կնոջ, կինը այր մարդուն: Ոիրոյ գգուանքները ճանաչուեցին որպէս բարձրագոյն ուրախութիւն աշխարհում: Բայց սառում է արեան ջերմութիւնը, բթանում է մարմնի զգայականութիւնը, յագուրդ է ստանում անսամնական կոշտ զգացմունքը և ոչ վաղուցուայ աստուածութիւնը գահաւէժ է լինում:

«Ո՛չ, գեղեցիկ մանուկ, վերջացրեց խիղճը, ես չեմ կարող քո սիրոյ համար հաշտուել կեանքի անարդարութեանց հետ, չեմ կարող քո փայփայանքներն ու գեղեցկութիւնը ճանաչել իրեւ աշխարհի սրտերը, բայց չես վառում մաքուր կրակ, քեզ համար ես ոչ մի կերոն չեմ հանդցնիլ:

Երիտասարդ գեղեցկուհուն փոխանակեց մի հռչակաւոր գիտնական, դուրս ընկած լայն ճակատով և արտայայտիչ աչքերով մի ծերունի. նա դանդաղօրէն մօտեցաւ պատուանդանին և ասաց.

«Դու ուզում ես իմանալ ինչնումն է կեանքի բարձրագոյն նպատակը. ինչի համար արժէ աշխատել, ապրել և տանջուել: Եթէ թոյլ տաս, ես կասեմ:—Տեսանելի աշխարհի յատկութիւնները քննել, ուսումնասիրել բնութիւնը. նրա գաղտնիքների վրայից վերցնել ծածկոյթը—ծածկութիյետեկից՝ ահա ամենամեծ երջանկութիւնը և, եթէ ուզում ես, մեր կեանքի բարձրագոյն նպատակը: Մինչև այժմ գեռ ես ամեն երեոյթ չի հետազօտուած, գիտութեան շենքը չի վերջացած. ուրեմն յանուն գիտութեան խնայիր կեանքը. թող տուր մեղ իմանալ բնութեան բոլոր գաղտնիքները, տիրել նրա ոյժերին:

Խիզճը ասաց ծերունուն:

— «Ճանաչում եմ քեզ, գիտութեան անվրդով քուրմ. լարուած ուշադրութեամբ հետևել եմ քեզ քայլ առ քայլ: Ես գիշերներ եմ անցկացրել քեզ հետ քո աշխատանոցներում, թանգարաններում և առանձնասենեակներում. քեզ հետ բարձրացել եմ սարերի գագաթը, իջել եմ գետնի խորքերը, պապակել եմ ծարաւից տօթակէզ անապատներում, սառել եմ սառոյցների և ձիւների մէջ, ես պատկառանք եմ զգացել քո գիտերի առաջ, հիացել քո գիտութեամբ և բնութեան ոյժերի վրայ ունեցածդիշխանութեամբ. թւում էր թէ

«Բնութեան հետ մի կեանքով էիր շնչում.

«Հասկանում առուակի թոթովանքը.

«Եւ տերեների զրոյցը ըմբռնում.

«Եւ զգում խօսերի շարժումը.

«Պարզ էր քեզ համար աստղալից գիրքը

«Քեզ հետ խօսում էր ծովի ալիքը»:

«Ես սրտանց հաւատում էի քեզ. իմ բոլոր լաւագոյն յոյսերը դրել էի քեզ վրայ. ես յուսով էի, որ մարդկութիւնը կտանես գէպի երջանկութիւն, արդարութիւն և

փրկութիւն, եւ որքան դառնապէս սխալուեցայ:

Դու գիտութեան լապտերը ձեռիդ շրջեցիր աշխարհիս քունճ ու պուճաղները. լուսաւորեցիր երկնքի յարդադողի ճանապարհը և արեան խողովակների ոստայնները. դու բացատրեցիր ինձ թէ ծովի յատակի և թէ երկրի խորքի գաղանիքները. բայց ինչացու է այդ բոլորը, և ովէ նրա աէրը—այս չկարօղացար իմանալ. Դու մարդուն հնազանդեցրիր երկիրը, դու տուիր նրան իշխանութիւն փայլակի, գոլորշու վրայ. բայց չես կարող ցոյց տալ այն ճանապարհը, դէպի ուր պէտք է ուղղէ նա իւր ոյժերը. Քո գիտերը մարդկանց ձեռքում նոյնն են, ինչ որ կրակը կոյրի ձեռքում: Կրակը կարող է լուսաւորել և տաքացնել, բայց կարող է և այրել թէ իրան և թէ ուրիշներին: Քեզ չի հետաքրքրում, թէ մարդկի ինչ կանեն քո գիտի հետ. ինչի կգործածեն նրան: Դու միակերպ հպարտանում եւ թէ գնդակներից պաշտպանուելու զրահով և թէ նոյն դրահը ոչնչացնող պայմթուցիկ նիւթով. Դու միւնոյն ջանասիրութեամբ որոնում և գտնում ես թէ այն գաղը, որը լուսաւորում է ընակարանները և թէ այն, որ խեղատում է մարդկանց պատերազմում: Դու ասում ես. «Թոյլ տուր մեզ իմանալ ամեն ինչ. ինայիր մեզ ի սէր գիտութեան»:

«Ես սէր ո՞ր գիտութեան, Բարձրագոյն գիտութիւնը—կեանքի գիտութիւնն է: Դու գիտես ինչպէս է ապրում աւազի հատիկը, փոքրիկ միջատը, որդը, բայց գիտես արդեօք թէ ինչպէս պէտք է ապրի մարդը: Հասկացիր, եթէ ես, ձեր խիզճը, պէտք է տանջուիմ և մաշուիմ ձեր համալսարաններում, թանգարաններում և մատենադարաններում այնպէս, ինչպէս և անգրագէտ ամբոխի մէջ: Եթէ գիտութեան վկայագիրը ծոցին մարդն էլ պէտք է առաջուայ պէս լինի կեղեքի, թոյլերին ճնշող, քարասիրտ, ինքնասէր, այն ժամանակ ինձ համար ինչ միսիթաբութիւն կայ քո գիտութեան մէջ: «Դու չես կարող հանդստացնել իմ ցաւը, ես չեմ կարող քո աշխատութիւնները ճանաչել որպէս բարձրագոյն երջանկութիւն մարդու համար:

«Ես սէր քո գիտութեան լուսի եռ չեմ հանգցնիլ իմ կերօնները. դու չկարողացար ցոյց տալ ինձ թէ ինչի համար արժէ ապրել»

Ամբոխի միջից լսուեցաւ նոր ձայն:

«Եթէ դու չես կարող գիտութիւնը մեր դարու սրբութիւնը համարել, այն ժամանակ համաձայնիր՝ որ արհեստի, նկազչութեան և երաժշտութեան առաջ չես կարող չխոնարհուիլ: Երդիչը, կամ նուագողը հրաշալի ձայներով արտայայտում են իրանց ամբողջ հոգին: Հազարաւոր մարդիկ շնչերը բռնած լսում են նրանց, իսկ գերասանը իւր յետեւից տանում է հլու ամբոխին քաղցրահնչիւն ձայների և ցնորքների աշխարհը: Գեղարուեռու տագէտը իւր հանճարով կենդանացնում է սառն մարմարինը, միտքը յաւերժացնում է արօյրի մէջ: Նրա ներկերը կենդանի և պայծառ պատկերներով ներկայացնում են կեանքը, նրա պատկերներն ու արձանները խկութեամբ աշխարհիս սրբութիւններն են. գեղարուեստագէտը նրանց մէջ մարմնացրել է իւր հոգին. նա, որպէս ստեղծագործող, իւր արտադրութիւնների մէջ փչում է շունչը:»

—Արուեստ, սուրբ արուեստ, գոչեց ամբոխը, խնայիր մեզ յանուն արուեստի, նայիր, որքան պատկերասրահներ և թանգարաններ ունինք: Մենք ահագին փողեր ենք ծախսում արձանների և պատկերների համար, մենք փառաբանում ենք բանաստեղծներին, գեղարուեստագէտներին, երաժիշտներին. նրանք են մեր պարծանքն ու փառքը, խղճա, ի սէր արուեստի:

«Ես խնդրում եմ ցոյց տալ, թէ ինչ կայ ձեր կեանքի մէջ սուրբ և վաեմ, ասաց խիզճը: Դուք անուանում էք արուեստը: Բայց չե՞ս որ սուրբը պէտք սրբացնէ, վաեմը—վաեմացնէ. ինչպէս ջերմութիւնը տաքացնում է, լոյսը լուսաւորում: Իսկ ինչու արուեստի սպասաւորները նախ և առաջ իրանք չեն ցոյց տալիս սրբութեան օրինակ. չեն կարող ծառայել իրեկ բարձրի և վաեմի կատարելատիտը: Նրանք պայծառ կերպով արտացոլացնում են կետնքը պատկերների վրայ, կենդանացնում են մարմարիսնը և

արոյրը՝ արձաններով։ Բայց նրանք իւսանք են պատկերացնում նրանք և կամ նրալիսի կեանք դնում անշունչ կաւի ու քարի մէջ։ «Կեանքը ինքն ըստ ինքեան շատ փոքր արժողութիւն ունի, ասում էր մի հին իմաստասէր, նրա գինը կախուած է այն բովանդակութիւնից, որը մենք դնում ենք նրա մէջ»։ Ես, ձեր խիզճը տանջւումեմ մարդու դատարկ կեանքի կեզոտութեամբ և անառակ կութեամբ և եթէ արուեստը նոյն այդ դատարկութիւնը, կեղաք և անառակութիւնն է արտացոլացնում իւր արտադրութիւնների մէջ, ես ինչու նրան պէտք է ճանաչեմ բարձր, աշխարհի սրբութիւն։ Եթէ ես կենդանի գեղեց կուհու մէջ մարմնացած տարփանքի գեղեցկութիւնը չկարողացայ սրբութիւն համարել, ինչու ուրեմն քաղցրա հնչիւն երդը նոյն տարփանքի մասին, պատկերը, արձանը, որոնք նկար են մարմնական գեղեցկութեան, պէտք է սրբութիւն լինին։ Արտաքին փայլը և ներկը չեն մեծացնում ներքին դատարկութեան դինը։ Հենց այդ է պատճառը, որ արուեստի բոլոր արտադրութիւնները՝ խիստ քիչ բացառութեամբ, կեանքի արտաքին զարդն են կաղմում ամեններն զաւացնելով և չբարձրացնելով նրան։ Քանի հազարաւոր քաթաններ զարդարում են ձեր թանգարաններն ու պատկերասրահները և այցելուների նրբան քիչ կեանք զարդարւում է արդարութեամբ և բարօրութեամբ։ Ո՛չ, ես չեմ կարող հանգցնել կերոնները։ Արուեստը թանգ է նստել մարդկութեան, բայց նա չունի աշխարհի սրբութեան բարձր գինը։ Այդ բոլորը ինքնախարէութիւն է, մարդկանց ներքին աղքատութեան, հոգեկան խեղճութեան արտաքին փայլն է միայն։ Փամանակ է պատառել դիմակը, այլ ես ոյժ չկայ համբերելու կեղծաւորութեան և ստութեան։

«Վեր դցեցէք կերոնները, դարձաւ խիզճը իւր ուղեւ կիցներին, թող մահը կտրատի այն հանգոյցը, որը կապուուած է գարեւոր անարդարութեամբ։ Պատանիները կերոնները բարձրացրին դիմների վրայ։ Զարագուշակ կրակները բորբոքուելով լուսաւորեցին գէմքեր, որոնք յուսահատութեան մահացուցիչ սարսափով և թախծով էին

բռնուած։ Ամբոխը շնչառպառ եղաւ։ Սպասում էին վախ-  
ճանին։ Յանկարծ վերջի կարդերից ձայն լսուեցաւ։ «Սպասիր,  
ոչնչացնելը հեշտ է։ աւելի լաւ է մտածիր արդեօք չկայ  
հնար ոչնչացողներին կենդանացնելու։»

Այսպէս էր խօսում մի անյայտ եկտոր։ Նրա թալկացած-  
գէմքը, ճակատի խորը կնճիռները, բաց, խորը, մտախոչ  
հայեացը վկայում էին աղօթքի և պահքի դաժան ոխրա-  
գործութեանց մասին։ Երկարատեւ ներքին աշխատանքի,  
լարուած մտածմունքի, հոգւոյ խազաղութեան և մաքրու-  
թեան մասին։

Ամբոխը շարժուեց և ճանապարհ բաց արաւ գէպի  
բարձրութիւնը։ Շատերը սթափուելով գոչում էին։ —  
Խօսիր, խօսիր, համոզիր նրան՝ ասա, որ աշխարհում կայ  
վաեմ բան, որ կեանքը մահից լաւ է։ Եկտորը առաջ անցաւ  
և տաց։

«Ես հենց նոր եմ եկել անապատից, որտեղ առանձ-  
նութեան մէջ անց եմ կացրել շատ տարի։ Ես էլ քեզ պէս  
շատ եմ հոգւով ցաւել՝ նայելով մարդկանց անարդարու-  
թեան և չարութեան վրայ։ Զրկուածների, ճնշուածների  
արտասութերը թափում էին իմ սրտի վրայ, որպէս  
հալուած արճիճ։ բթացած ամբոխի սանձարձակ խրախ-  
ճանքը թունաւորում էր իմ հոգին։ Ես խեղգում էի-  
լնդհանուր ստութեան, մատնութեան և ստորաքարշու-  
թեան մէջ։ այլ ես ոյժերս չէին ներում համբերելու։

«Ես անիծեցի չարիքը, քաշուեցայ անապատ։ բայց  
չանիծեցի մարդկանց և կեանքը։ Ես չմոռացայ աշխարհը։  
Երկար տարիներ անցկացրի կեանքի Մեծ Գիրքը ձեռիս-  
Փրկչի խօսքերը կարդալով։ Եւ կարծում եմ, որ աշխարհի  
մէջ կայ մեծ բան, որ կեանքում կարող է լինել սրբութիւն-  
Դու դատապարտեցիր եւ գեղեցկութիւնը իւր զուարճու-  
թիւններով եւ գոռող դիտութիւնը և մարդու փառքը  
կազմող արուեստը։»

Քո դատաստանը արդար է։ Նրանք այնպէս, ինչպէս  
որ կան, չեն կարող լինել աշխարհի փրկութիւն։ Գեղեցկու-  
թիւնը տալիս է կոպիտ զուարճութիւն, դիտութիւնը ծա-

ուայում է օգտակարին, արուեստը խարսուսիկ փայլով ծածկում է հոգւոյ աղքատութիւնը, Այդ անօթների միջի ըմպելիքը բարձր չի կարող լինել, Ուստի եթէ մարդկանց երջանկութիւն ես ցանկանում, մի քանդիր կեանքը. մի փշիր և արհամարհիր նրա լաւագոյն անօթները Աշխատիր նրանց միջի ըմպելիքը նորոգել: Ինչպէս Յիսուս Կանա քաղաքի հարսանիքում ջուրը փոխարկեց գինու, նոյնպէս և դու Քրիստոսի նոյն զօրութեամբ կերպարանափոխիր այժմեան գեղեցկութեան, գիտութեան և արուեստի էութիւնը Այժմ մարմնի գեղեցկութիւնը հասկանալի է միայն մարմնին. Նա, ինչպէս կրակի վրայ ածած իւղը, զարթեցնում և բորբռքում է մարդու կոպիտ կրքերը Լուսաւորիր նրան հոգւոյ գեղեցկութեամբ, այն ժամանակ գեղեցկագոյն գէմքի լուսաւոր և ճառագայթափայլ աչքերը կղարթեցնեն ոչ թէ տարփանք, այլ հոգւոյ թմրած լաւագոյն զգացմունքներ, Գիտութիւնը այժմ ուսումնասիրում է ընութիւնը և մարդկանց հնագանգեցնում նրա ոյժերը. Նա կազմում է մարդուս հպարտութիւնը և աւետում նրա փառքը: Դու ուղղիր նրան այլ ճանապարհով, Աստուածաշնչի բանաստեղծն ասում է. «Երկինք պատմեն զփառս Աստուծոյ»: Թող գիտութիւնը ցոյց տայ մարդկանց Աստուածային փառքի այդ մեծութիւնը. թող նա բաց անի մարդկանց առաջ ամենայն պարզութեամբ ստեղծագործութեան խելացիութիւնը, թող հիացնի մեր միտքը տիեզերքի պանչելի ներդաշնակութեամբ, ներշնչէ մեզ ջերմեռանդ ելկրպագութիւն Բարձրագոյն և Յաւիտենական էութեան առաջ. Թող նա ցոյցտ այ մարդուն Յաւիտենականի Մեծութիւնը. այն ժամանակ նա կղարթեցնէ մարդու մէջ Բարձրի զգացմունքը, այն ժամանակ նա ինքը-գիտութիւնը, կինի երկրիս վրայ վսեմ և բարձր:

«Արուեստը արտացոլացնում է կեանքը, իսկ եթէ կեանքը վատ է, արժէ արդեօք արտացոլացնել նրան, միտք ունի արտադրել նրան ներկերի, մարմարիսնի և արոյրի մէջ: Ի վերուստ չնորհ ստացած գեղարուեստագէտը պէտք է մեզ բարձրացնի գէպի վեր, բարձրացնէ մեր

հոգին, աղնուացնէ մեր սիրողը։ Նրա նպատակը պէտք է լինի նկարագրել կեանքը ո՞չ այնպէս, ինչպէս որ կայ, այլ այնպէս, ինչպէս որ պէտք է լինի։ Նրան մատչելի են մեզ համար անմատչելի հոգւոյ գագաթները, թող նա զգացուի, հասկանայ և ապա մեզ պատմէ հնչուն ստանաւորներով, պայծառ պատկերներով և կենդանի գէմքերով կեանքի բարձրագոյն գեղեցկութիւնը՝ արդարութեան, սիրոյ և բարօրութեան գեղեցկութիւնը։

Եւ այն ժամանակ արուեստը ճիշտ որ կլինի սրբացած Գեղարուեստագէտը աշխարհի համար թանկ կլինի նրանով, որ «բարի զգացմունքներ է դարթեցնում» մարդկանց մէջ»։ Բայց ուրիշին լոյս տալու համար նախ պէտք է լոյս ունենալ իր մէջ, թէ չէ.

Ինչպէս կլինիս առաջնորդ,

Եթէ ճանապարհին չես ծանօթ։

«Իսկ ճշմարիտ կեանքի ճանապարհը կարելի է իմանալ միմիայն նրանից, ով ասել է իւր մասին։ «Ես եմ ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք»։ Այդ ճանապարհով միայն կարելի է ճանաչել կեանքի իսկական գինը։ Ահա այդ նոր ճանապարհի մասին պէտք է քարոզել աշխարհին։

«Մարդկային նախկին կեանքը գիշատ' չէ քեզ։ Դու, մարդկանց խոցոտուած խիղճդ, երկրի վրայ բարձրը և սուրբը գտնելու յոյսդ կտրելով վճռել ես ջնջել մարդկային աղքը, իզուր, թիշիր մարդկանց ձեռքով խաչուած Աստուծոյ Որդուն։ Նա Գեթսեմանի պարտիզում աւելի չարչարանք կրեց, քան դու, սակայն Գողգոթայի վրայ նա չանիծեց մարդկանց, այլ աղօթեց նրանց համար Հօրը։

«Երկրի վրայ կայ Վասեմը և Սուրբը՝ այդ Քրիստոսի արդարութիւնն է և սէրը։ Եւ դու, խիղճ, հանգցրու քո սարսափելի կերտները և նրանց փոխարէն վառիր Աւետարանի ճրագը։ Նրա հետ ցած իջիր բարձրութիւնիցդ և գնա այդ խելակորոյս մարդկանց ամբոխի մէջ։ Առանց չարամտութեան, առանց յանդիմանութեան, ձածկելով սրտիդ տանջանքները, լուսաւորիր իւրաքանչիւրի հոգւոյ ամենամութ անկիւնները։ Եթէ հալածեն մի տեղից, դնա

ուրիշ տեղ, Հաւատան, դու յաւիտեան անպատսպարան չես մնալ:

Ճգնաւորը լռեց: Արևելքում երկնքի ծայրը սկսեց շառագունել, սկսեց լուսանալ, լուսանալու հետ միասին՝ եկուորի խօսքերից յետոյ սկսեց լուսաւորուիլ և խղճի թախծալից երեսը նա հանգցրեց պատանիների սարսափելի կերոնները, վառեց մաքուր խղով լապտերը, իջաւ բարձրութիւնից և խկոյն և եթ անյայտացաւ ամբոխի մէջ . . . .

Ծնթերցող, եթէ պատահի լսես թէկուզ թոյլ բաղխում կամ ձայն սրախիդ շէմքում, խուլ մի մնար, դա աշխարհի տանջուող ոգին է, մարդկանց խիղճը և ապաստանարանն է խնդրում, քաց արա նրա առաջ հոգիդ, գէթ ժամանակ կաւորապէս ընդունիր Առտուծոյ հիւրին:

(Նարունակելի).

### ՀԻՌՎՄԸՑԵՑԻ ՀԱՐԻՒԹԵՑԸ\*)

Ք. Մարիվե.

Մօտաւորապէս առաւօտեան ժամի 10 էր, երբ որ նրան քահանայալեաի գաւիթը տարին: Ամբողջ դատը կատարուեց զարմանալի, անքնական արագութեամբ: Դատարանի գաւթում զօրքեր էին կանգնեցրել, առանց նրանց մասնակցութեան անկարելի էր մահուան պատիժ կատարել, և այդ կաշառուած, հրէաների իշխաններից ու ծերերից գողուած զինւորներն սկսեցին տանջել Դատապարտուածին:

Խնչպէս և նախորդ գիշերը, քահանայալետի նախագաւթում, հարուածներ էին տալիս նրա գլխին, թքնում:

\*) Հիվա, 1893 թ. № 12.